ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 11/57-Հ

«27» 03 2023 թ. ք. Երևան

ՄՀԵՐ ԱՓՐԻԿՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարի (ծածկագիր՝ 31-Ղ1-1) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթի հարցազրույցն անցկացնող հանձնաժողովի 2023 թվականի մարտի 22-ի եզրակացությունը և Մեր Ափրիկյանի դիմումը, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, 75-րդ հոդվածի 2-րդ մասով, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 16-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 1554-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 147-րդ և 151-րդ կետերով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Մեր Սարգիսի Ափրիկյանին նշանակել Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարի (ծածկագիր՝ 31-Ղ1-1) պաշտոնին:
2. Մեր Ափրիկյանի պաշտոնային դրույքաչափը սահմանել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ